

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՍԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼԵԶԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ՁՈՐԴՈՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍ
/ԳԵԿՈԼԳՈԼՄՆԵՐԻ ՂՐՈԼՅՅՆԵՐ/
6-8 ԴՈԼԻՍԻ, 1984 թ.
ԱրզակաՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՅԻՆ
Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 8 4

800 (423 25) (063) ✓
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՇՈՒՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՋԱԿ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼԵՋԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ՉՈՐԴՈՐԴ ԿՈՆՓԵՐԵՆՍ
/ԳԵԼՈՒՄՆԵՐԻ ՂՐՈՒՅՔՆԵՐ/
6-8 հունիսի, 1984 թ.
Արզակաձ

A II 73292

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 8 4



Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիթերոգրդի որոշմամբ

Печатается по решению ученого совета Института языка
АН Арм.ССР

ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА АН Арм. ССР

IV РЕСПУБЛИКАНСКАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ

МОЛОДЫХ ЛИНГВИСТОВ
(тезисы докладов)

6 -8 июня 1984 г.

с. Арзакан

ИЗДАТЕЛЬСТВО АН Арм. ССР

ЕРЕВАН - 1984

ՇՈՇԱԹԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԲԱՌԱԿԱՋՄԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՑՑՆԵՐԻ
ԿԱՌԱՐԱՅՎԱԾՔԸ /ըստ հայերեն, ռուսերեն, անգլերեն
լեզուների նյութի /

1. Ձեկուցումը նվիրված է հայերենի անածանց շոշափական բայերի և նրանց ռուսերեն ու անգլերեն համարժեքների բառակազմական և իմաստաբառակազմական հարադասություն /ԲՀ, ԻԲՀ/, ինչպես նաև այդ լեզուների ԻԲՀ-ների համար ընդհանուր բառակազմական նշանակությունների դրսևորմանը:

Հետազոտման նյութ են ծառայել շոշափել, դիպչել, կպչել, հպել, քսել, хупать, трогать, касаться, осязать, touch, feel բայերը:

2. Ըստ Ռ.Ս.Մանուշարյանի, Ե.Ա.Ջեմսկայայի, ԲՀ-ն քնորոշվում է որպես ընդհանուր նախադիպական և բառակազմության միևնույն /ներկա ուսումնասիրության մեջ՝ առաջին/ սատիմանի վրա զտնվող անանցավոր բառերի ամբողջություն: ԻԲՀ-ն մասնավոր ԲՀ-ների ընդհանրացումն է: Խոսքիմասային նշանակություններով ԲՀ-ի անդամները խմբավորվում են բլոկներում, ԻԲՀ-ի անդամները՝ զուգներում:

3. Շոշափել, դիպչել, կպչել, հպել, քսել բայերի ԲՀ-ները առերեքվում են ինչպես ծավալով /6 : 2 հարաբերությամբ/, այնպես էլ հարադասությամբ անդամների հավաքածուով /օրինակ՝ շոշափել > շոշափել, շոշափում, շոշափելիք, շոշափելի, շոշափական, դիպչել > դիպցնել, դիպում: Նրանց ԻԲՀ-ի կազմի մեջ մտնում են զոյակակազմակա բայական զուգները: Առաջինը ներկայացված է բայական /շոշափում, քսում, հպում/ և զործիքի /շոշափելիք, քսելիք/ նշանակություններով, երկրորդը՝ կրավորական /շոշափվել, քսվել/ և ներգործական /դիպցնել, կպցնել/ նշանակություններով:

4. Ռուսերենի շոշափական բայերի ԲՀ-ների ծավալը փոփոխվում է 10 : 2 հարաբերությամբ: Նշված բայերի ԲՀ-ները համեմատաբար միասնակ են: Նրանց ԻԲՀ-ները դրսևորում են բայական զուգու կրավորական /осязаться, хупаться /, միասնակ /трогуть, коснуться /, բազմակի և հերթովի /перетрогать, перехупать / նշանակություններ և զոյակակազմական զուգու բայանուն /хупанье, касание, трогание /, զործիքի անուն /хупальце, хуп, осязание / նշանակությունները:

5. Touch, feel բայերի ԲՀ-ները համընկնում են մոտավոր-

րազես հավասար ծավալներով /6-7 անդամ/ և միատեսակ ներկայացուցիչներով: Անգլերեն բայերի հիշ-ները ներկայացված են 4 նշանակություններով, որոնք համախմբվում են գոյականական /բայանուն - touch, feel , գործողի անուն - toucher, feeler , գործիքի անուն - toucher, feeler, feeling / և ածականական /գործողությունը ենթարկվելու ընդունակ - touchable, feelable / գոտիներում:

6. Երեք լեզուների հիշ-ների համար ընդհանուր նշանակություններն են բայանվան և գործիքի անվան նշանակությունները: Ծավալով և անդամների միատեսակությամբ իրար ավելի մոտ են ուղեսերների և անգլերենի հիշ-ները: Մյուս կողմից՝ անգլերենի հիշ-ում լրիվ բացակայում է բայական գոտին այն դեպքում, երբ ուղեսերների հիշ-ում նույնանուն գոտին ունի ամենամեծ տեսակարար կշիռը, իսկ հայերենի հիշ-ում ներկայացված է 2 անդամով:

7. Տիպաբանական տարբեր համակարգերի պատկանող լեզուների ամենագործածական բառապաշարի բառակազմական հնարավորությունների հետազոտումն ու համադրումը գործնական և տեսական խոշոր արժեք ունի: Այն հնարավոր է դարձնում լեզուների բառակազմական համակարգերի կառուցվածքում բացահայտել նման և տարբեր հատկանիշները և պարզաբանել բառակազմության և լեզվական այլ հարկաշարերի /քրԿ / հարաբերությունները:

Վ.Վ.ԱՌԱՔԵԼՅԱՆ /Երևան/

ԱՌԱՐԳՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ , ,
,,ՌԻԳՎԵԴԱՅԻ,, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հինդուիզմի սրբազան գիրքը՝ ,,Ռիգվեդան,, /այսուհետև՝ Ռվ/ հին հնդկերենով ստեղծված ամենավաղ հուշարձանն է /մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջ - 1-ին հազարամյակի սկիզբ/: Այն կազմված է 1028 ներբողներից, որոնք հիմնականում գոհաբերությունների ժամանակ կատարվող ձոներգեր են՝ ուղղված հին հնդկական աստվածներին:

Ռվ-ն բազմիցս թարգմանվել է եվրոպական լեզուներով: Հայերեն թարգմանությունը ընտանիք իրականացվում է ռուշին անգամ, Ռվ-ի հաջորդի գիտական հրատարակությունը պետք է ունենա ներբողների մ. արժեք, և՛ շափածո թարգմանությունները:

Անթարգմանելի իրականությունները բաժանվում են երկու խմբի՝ լեզվական և թեմատիկ: Լեզվական իրականություններին են պատկանում որոշ քե-

ըականական կարգեր, տեքստի հնչյունաբանական հարաբերությունները, կըշ-
ռույթը, պրոսոդիան, չափը և այլն: Թեմատիկ իրակությունները կապված
են մշակույթի տեսակների միջև եղած տարբերությունների, նրա զարգաց-
ման աստիճանի և որակի հետ: Դրանք են տեխնիկական տերմինները, կրոնա-
կան սպասավորների, ծեսերի, ծիսական առարկաների անունները, երկարու-
թյան, կշռի չափերը, դրամի, գնքի, ուտեփիքի, խմիչքների, նվագարան-
ների, հասարակական խմբերի, խողերի անունները, փիլիսոփայական տեր-
մինները, աստվածներին վերաբերող զանազան բարդ մակդիրներ և այլն:

Իկ-ի թարգմանության ժամանակ օգտագործվում են թեմատիկ իրակու-
թյունների փոխադրման հետևյալ ձևերը.

1. Տառադարձություն, օրինակ՝ trīkadruka - տրիկադրուկա /ծեսի ան-
վանում/, brahmān - բրահման /զոհաբերության ժամանակ աղոթք կարդա-
ցող քուրմ/, trisṭūbh - տրիշտուբհ /վեղայական բանաստեղծական չափի
անուն/ և այլն:

2. Նոր բառի ստեղծում:

ա/ Բառապատմենում, օրինակ՝ yajñāketu - յիսադոշ, doṣāvastṛ
- խավարացիր, svarvīd - լուսագյուռ և այլն:

բ/ Խմաստային նորաբանության ստեղծում, օրինակ՝ ghr̥ta զոհայուղ,
havís - զոհախմիչք, bārhis - զոհախոտ, hōtṛ - ժոնասաց/զոհածեսի
ժամանակ ներբողներն արտասանող քուրմ/:

3. Մոտավոր թարգմանություն:

ա/ Մասնավորի փոխարինումը ընդհանուրով /և հակառակ/, օրինակ՝
ciccika /թռչնի տեսակ/ - թռչուն:

բ/ փոխարինում գործառական նմանակով, օրինակ՝ purohita բրմա-
պետ /արքայական տան քրմապետ/, քtvīj - զոհագործ /քուրմ, որ ըստ
տարվա եղանակների զոհ է մատուցում/:

գ/ նկարագրական թարգմանություն, օրինակ՝ rōdasī - զույգ աշ-
խարհներ /Նրկիսք և Նրկիր/, rājasī - զույգ ուրոտներ /երկնային
և երկրային տարածություններ/, havīṣmant - զոհախմիչք լցնող,
kṛtā - հաշող նետում /վեզ խաղի տերմին/:

Այս միջոցները իկ-ն թարգմանելիս օգտագործվում են տարբեր չա-
փերով: Տառադարձությունը՝ ելնելով հայերենի բառաստեղծական ավան-
դույթներից և հնարավորություններից, հատկապես բանաստեղծական թարգ-
մանության մեջ հազվադեպ է կիրառվում: Ամենից հաժախ օգտագործվել
են 2, 3, 4 ձևերը: Հայերենի բառակազմական մեծ հնարավորությունները
հազվադեպ են դարձնում նաև 5-րդ ձևի օգտագործումը:

ԼԵՋՎԱՆԱՆ ՎԱՐՔԻ ԱՆՂԱԳԱՐՄԱՆ ՀԱՐՑԻ ԵՌԻՐՃԸ

Երևանի արդի լեզվավիճակը, չնայած էթնիկական կազմի բարձր միաժարրությունը, բավականին բարդ է, որը պայմանավորված է մի կողմից՝ քնիկ լեզվի /հայերեն/ գոյություն տարբեր ձևերի առկայությամբ /բարբառներ, զրական և խոսակցական լեզու/ և մյուս կողմից՝ ազգային-ուսներեն երկլեզվության լայն տարածմամբ: Եթե երկլեզվության լայն տարածումը հիմնականում բացատրվում է երկրում ընթացող լեզվական գործընթացների ընդհանուր զարգացմամբ, ապա հայոց լեզվի գոյության տարբեր ձևերի կիրառման պատճառը մշակութային և քաղաքական առանձնահատկություններ ունեցող և լեզվական գործունեությամբ միմյանցից զգալիորեն տարբերվող միգրացիոն խմբերի առկայությունն է:

Հանրալեզվաբանության զարգացման ժամանակակից մակարդակն անհրաժեշտ է՝ դարձնում կադապտման սկզբունքի կիրառումը, որը թույլ կտար մշակել լեզվական գործընթացների զարգացման, ուղղվածության և ընթացքի առավել խնայողական կողմավորված համակարգ: Ասվածը մեծ չափով վերաբերում է նաև լեզվական վարքին:

Լեզվական վարքը անատի կողմից կենսական տարբեր պայմաններում այս կամ այն լեզվի օգտագործումն է, այլ կերպ ասած՝ դա շփման թույլատրելի և առավել հնարավոր միջոցի ընտրությունն է հաղորդակցման տվյալ իրավիճակում:

Երևանի բնակչության լեզվական վարքը քննարկելիս նպատակահարմար ենք համարում օգտվել է.Գ.Թումանյանի առաջարկած տիպաբանական կադապտացիաներից, որոնք չնայած նախատեսված են լեզվավիճակի կադապտման համար, բայց հաջողությամբ կարող են օգտագործվել և լեզվական վարքը քննարկելիս:

Երևանում ծնվածների լեզվական կադապտացիան բավականին պարզ է և բնորոշվում է հայերենի զրական և զրական-խոսակցական տարբերակների հետ նաև ուսաց լեզվի կիրառմամբ: Ի տարբերություն միգրացիոն խմբերի, այստեղ հասարակական տարբեր շերտերի և ուղղությունների միջև հստակ տարբերություններ չկան:

Հանրապետության մյուս քաղաքներից և գյուղական շրջաններից եկած վերաբնակիչների լեզվական վարքի կադապտում առկա են ինչպես հա-

յոց լեզվի զրական, ժողովրդախոսակցական և բարբառային տարբերակները, այսպես էլ ոուսաց լեզուն, ընդ որում ոուսերենը նախորդ խմբի հետ համեմատած, զգալիորեն պակաս տեղ է զբաղեցնում: Այս խմբում արդեն հետևյալ տարբերություններ կան մտավոր և ֆիզիկական աշխատանքով զբաղվողների միջև: Մտավոր աշխատանքով զբաղվողների լեզվական վարքի կադապարը արատացուում է զրական հայերենի կայուն դիրքը, բարբառների կիրարկման շրջանակների նվազումը, ժողովրդախոսակցական և ոուսաց լեզվի տարածումը: Ֆիզիկական աշխատանքով զբաղվողների մեջ բարբառը դեռևս իր դիրքերը չի կորցրել, բայց նրա կողքին մեծանում է ժողովրդախոսակցական հայերենի նշանակությունը:

Միութենական մյուս հանրապետություններից եկած վեճաբանների լեզվական վարքն ունի տարբեր կադապարներ՝ կապած մեկնման վայրի, աշխատանքի ընդունի, բնակավայրի նախկին տիպի հետ և այլն: Այստեղ առկա են հայերենի գոյության բոլոր ձևերը և ոուսաց լեզուն, ընդ որում վերջինիս օգտագործումն այստեղ անհամեմատ բարձր է: Այս խմբում առկա է նաև բնակության նախկին վայրի էթնոսի լեզուն: Վերջինս, սակայն, հողորդակցության ուղորտ չունենալու պատճառով արագորեն դուրս է մղվում լեզվական վարքից:

Հայրենադարձների լեզվական վարքի կադապարը կազմելիս պետք է հաշվի առնել նաև հայրենադարձվելու վաղեմիությունը: Մինչև 1960 թ. հայրենադարձների լեզվական վարքը քիչ է տարբերվում բնիկ երևանցիների լեզվական վարքից: 1960 թ. հետո եկածների վարքի կադապարի առանձնահատկությունը զրական արևմտահայերենի առկայությունն է, ոուսաց լեզվի համեմատաբար թույլ դիրքը:

Կադապարման սկզբունքի կիրառումը լեզվական վարքն ուսումնասիրելիս զգալի առավելություններ ունի ավանդական մեթոդի նկատմամբ:

Այն հաջողությամբ կարող է կիրառվել լեզվական գործընթացների մյուս հարցերում ևս:

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵՋԱԿԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՑԵՐ

1. Լեզվում տարածական հարաբերությունները դրսևորվում են առարկաների՝ տարածական ուրևէ կողմնորոշիչի նկատմամբ ունեցած կայուն կամ ոչ կայուն հարաբերությունների ձևով: Այսպես /ստատիկ/ տարածական հարաբերությունները արտահայտող սուբյեկտների բայական առանցքը զրոյից է, որին սովորաբար հաջորդում է սեղի պարզա, ոչ կայուն /դինամիկ/ տարածական հարաբերությունները արտահայտող սուբյեկտների առանցքը՝ շարժվել բայը, որին հաջորդում է ուղղութեան սեղի պարզա /տառջինն արտահայտում է արտադինամիկ, երկրորդը՝ ներդինամիկ տարածական հարաբերություններ/: Որոշ դեպքերում կարելի է առանձնացնել նաև ստատիկ-դինամիկ տարածական հարաբերություններ, երբ ստատիկ հարաբերությունները ենթադրում են նախորդող տեղաշարժ կամ էլ, ընդհանրապէս, դինամիկ հարաբերությունները ենթադրում են նախորդ ստատիկ վիճակ:

2. Այսպէս է տարբերակել օբյեկտիվ և սուբյեկտիվ տարածական հարաբերությունները ըստ խոսողի ու հաղորդակցման մյուս մասնակիցների բացակայութեան/ներկայութեան, ընդ որում սուբյեկտիվ տարածականութիւնը արտահայտող սուբյեկտներում պարունակվում են իրադրական բաներ, որոնց առարկայական վերաբերությունը բացահայտվում է՝ կապած խոսքային իրադրութեան և նրա մասնակիցների հետ: Այսպէս է առանձնացնել նաև օբյեկտիվ-սուբյեկտիվ տարածական հարաբերություններ, որոնց արտահայտութիւնը կապած է նախադասութեան առկա տրոհման հետ:

3. Լեզուների մեծ մասում տարածական հարաբերությունները հիմք են ծառայում ժամանակային, ինչպես նաև ավելի վերացական հարաբերությունների արտահայտման համար: Այս աիպի սուբյեկտներում տարածական իմաստային դաշտի բոլորը փոխաբերական արժեք են ստանում:

ԲԱՅԱԿԱՆՔՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՌԱՆԵՐՏՈՒՄ

1. Բառը լեզվի առանցքային միավորն է: Բառերն ըստ իրենց կոուլցվածքի, իմաստների, գործածութեան և ձևափոխութեան կազմում

են զանազան համակարգեր, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում են լեզվաբանության տարբեր բաժիններ:

2. Բառակազմությունը զբաղվում է տվյալ լեզվի կամ նրա զարգացման որևէ շրջանի բառապաշարի կամ նրա որոշակի հատկանքների ուսումնասիրությամբ՝ բառերի առաջացման նկարագրությամբ, բառերի բաղադրիչների տեսակավորմամբ, այդ բաղադրիչների կապակցման եղանակների, հերթագայման ու համախափանության քննությամբ, բառակերտման համակարգերի կաղապարների մշակմամբ, այդպիսով՝ նաև նոր բառերի ստեղծման միջոցներով ու եղանակներով:

3. Բառակազմության առավել կիրառական բնագավառներից է բառակերտումը, որն ուսումնասիրում է նոր բառերի առաջացման ընթացքը, ներքին և արտաքին կապերը:

4. Բառերը կազմում են շարակարգային և հարացուցային դասեր, որոնք կարող են ժանաչվել բառակազմական վերլուծության միջոցով: Վերլուծությունը կատարվում հատույթավորման /երկատման/ սկզբունքով, երբեմն նաև՝ փոխակերպման մեթոդով:

5. Բառը բաղկացած է հատույթային երկու միավորներից՝ սերող և բառավարտող հիմույթներից /տվյալ մակարդակի ավարտուն միավորը, նույն մակարդակի մեկ ուրիշ միավորի հոգավորիչը ակադ. էդ. Ադայանը անվանել է հիմույթ և կիրառել ձևաբանության մեջ. այդ տերմինը որոշակի նկատառումներով գործածում ենք բառակազմության համար: Սերող հիմույթն ըստ բաղադրիչների քանակի լինում է մենամիավոր և բազմամիավոր, ըստ տեղի՝ նախադիր և վերջադիր: Եթե բառավարտող հիմույթը կտրող է ածանց, -նախդիր կամ արմատ լինել, ապա սերողը պարտադիր լինում է արմատ /պարզ, ածանցված, նախդրով կամ բարդված/:

6. Բառակերտման համար անհրաժեշտ է արմատի, ածանցի, նախդրի, ինչպես նաև բառահարաբերական զանազան մասնիկների առկայություն: Բառակերտումը կարող է ընթանալ թշից ծախ, ծախից աջ և խառը: Այն ինչ ուղղվածությունն էլ ունենա, միշտ առաջին բաղադրիչն է լրացնում երկրորդին /եթե նրանք ստորադասական կապի մեջ են գտնվում/:

7. Բառը բառակերտման գործընթացի արդյունքն է, իսկ այդ ընթացքը կարող է ընդգրկել մեկից չորս քայլ: Ըստ խոսքիմասային պատկանելության և կազմության ինչպես հիմույթները, այնպես էլ բառակերտման արդյունքները կարող են ունենալ բազմաթիվ կաղապարներ և ժողովրդական բանավածային տեսքով:

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԵՐԿԼԵԶՎՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿԱՆ ՄԻ
ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

1. Հոգեբանական և հասարակական-մշակութային իրավիճակ:

Ինչպես ուրիշ լեզուների, այնպես էլ հայերենի և ռուսերենի լեզվական շփման ուսումնասիրությունը պետք է հիմնվի երկլեզվության արտալեզվական ոլորտի քննության վրա: Լեզվաբանը, որը վերանում է հոգեբանական և հասարակական գործոններից և ձգտում է ներքին լեզվական ուսումնասիրության, սոսկ նվազեցնում է հետազոտվող ներթափանցումների ծավալը և անկարող է ըստ ամենայնի հետազոտել վերջինիս բնույթը, ուղղությունը, ինչպես նաև երկլեզվակիր անհատների խոսքային վարքը:

2. Նմանություն և տարբերություն: Ձուգամիտություն և ամբարհատություն:

Երկլեզվության քննությունը պետք է կատարել հնչյունական, քերականական և բառային մակարդակներում, հաշվի առնելով այդ մակարդակներում եղած նմանություններն ու տարբերությունները: Վերջիններիս հիման վրա էլ ընդունված են ուսումնասիրության մեթոդները՝ ա/զուգամիտությունը, որը կիրառվում է նմանությունների դեպքում, և ք/ամբարհատությունը, որը կիրառվում է տարբերությունների դեպքում:

3. Լեզվական ներթափանցումներ:

Հիմնականում ներթափանցումները լինում են ռուսերենից հայերենի մեջ, և այդ դեպքում հասարակության տարբեր սոցիալական խմբերում նկատվում են լեզվական նորմայից տարբեր շեղումներ: Այսպես ուսումնասիրվում են հատկապես այն շեղումները, որոնք բնորոշ են ուսանողության լեզվին և հետևանք են հասարակական ու հոգեբանական որոշակի գործոնների:

ԿԻՐԱՌԱՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ
ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑԻ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ

1. Առ. Մալխասյանցի , Հայերեն բացատրական բառարանում , ,
լայն արտացոլում են զանել կիրառական արվեստի տերմինները , որոնց ընդ-
հանուր թիվը հասնում է 1500-ի : Այդ բառապաշարում համեմատաբար մեծ
թիվ են կազմում կիրառական արվեստի նյութերի և գործիքների , տարազի ,
սպասքի , զենքերի անվանումները :

2. Բառարանում արտացոլված կիրառական արվեստի տերմինները վե-
րաբերում են հայերենի զարգացման տարբեր փուլերի : Արդի փուլում դե-
րանք կենսունակության և գործածության տարբեր աստիճան են ղրսևորում :

3. Կան զրաբարից , միջին հայերենից ավանդված շատ բառեր ,
որոնք համապատասխան վերաիմաստավորման դեպքում կարող են ստանալ տեր-
մինային որոշակի կիրառություն , ինչը հնարավորություն կտա խուսա-
փել անհարկի նոր փոխառություններից :

4. Լեզվական տարբեր շերտերից ավանդված տերմինային բազմաթիվ
միավորներ թեև ընդհանուր խոսակցական բառապաշարում տեղ չունեն ,
բայց իբրև պատմական տերմիններ կենսունակ են արվեստի ու մի շարք գի-
տակարգերի լեզվում :

5. Սո. Մալխասյանցի բառարանում արտացոլում գտած մի շարք տերմի-
նային միավորներ իմաստային փոփոխություններ կրելով ձեռք են բերել
բազմիմաստություն : Որոշ դեպքերում առաջացել է հոմանշություն կամ
համանունություն :

Լեզվական կամ արտալեզվական մի շարք պատճառներով տերմինային
շատ միավորներ ներկայումս կիրառելի չեն , սակայն հետաքրքրություն
են ներկայացնում մի կողմից` իբրև լեզվի պատմության փաստեր , մյուս
կողմից` իբրև հայ ժողովրդի պատմամշակութային առնչությունների լեզ-
վական վկայություններ :

6. Վերջին տասնամյակների ընթացքում կուտակված բառարանային
հարուստ նյութը թույլ է տալիս Սո. Մալխասյանցի բառարանում տեղ զը-
տած տերմիններից որոշ վերապահությամբ կատարել ընտրություն , նախ-
պատվություն տալով այն բառերին , որոնք համապատասխանում են ժամա-
նակակից հայերենի նորմավորման արդի սկզբունքներին :

Մ.ՅՈՒ. ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՔԱՐԿՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵՋԱԿԱՆԱԿԱՆ
ԱՐԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ ժողովուրդը մեծ ուշադրություն է ցուցաբերել Լեւոն-տովի գրական ժառանգության նկատմամբ: Նրա բանաստեղծությունների առաջին հայ թարգմանիչներն էին Մոսկվայի Լազարյան մեմարանի սաներ Հ.Համազասպյանն ու Մ.Սալբանդյանը, Սո. Նազարյանցը, Մ.Մաղաբյանը, Հովհ.Խումանյանը: Լեւոնտովին թարգմանել են նաև Ե.Ջաբենցը, Ն.Ջաբ-յանը, Պ.Սևակը, Վ.Դավթյանը և այլոք:

Վ.Գ.Բելինսկին Լեւոնտովի ստեղծագործության ընդրոշ առանձնա-հատկություններից է համարում ոչ միայն , ,բուրմուռների թարմությունն ու ձևերի գեղարվեստական պերժուկությունը, պատկերների պոետիկական հրա-պուլրն ու վեհ պարզությունը, ... զգացմունքի լիութունն ու բովան-դակության անընդգրկելիությունը, , , այլև , ,լեզվի թափը, հզորու-թյունը, չափածոյի աղամենդա ամրությունն՝ ու մետաղյա հնչյունը, , : Թարգմանիչ-բանաստեղծները յուրովի, առավել կամ պակաս հարազատու-թյամբ են վերարտադրել այս ամենը:

Այս տեսակետից ուշագրավ է , ,Հայրենիք, , բանաստեղծությունը Պ.Սևակի թարգմանությամբ: Բառային որոշ կրկնություններն ու հավելում-ները ավելի մաքուր ձևով են դարձնում բանաստեղծական պատկերը: Ժիշ է , , բնագրի համեմատությամբ մասամբ ավելանում է բանաստեղծական տողի վան-կերի քանակը /որոշ դեպքերում սրան նպաստում է նաև ռորոշիչ-որոշյալի քերականական կապակցությունները երկրորդական նախադասություններով թարգմանելը/, բայց և այնպես պահպանված է բանաստեղծության ներքին թափը, շունչը: Բազմաթիվ հարադրավոր բայերը, բարդությունները ներ-դաշնակում են բանաստեղծության ժողովրդական ոգուն:

Լեզվաոճական առումով հաջողված է նաև , ,Կռակ, , բանաստեղծու-թյունը Կ.Էմինի թարգմանությամբ: Դարձվածները, ժողովրդական բառ-ձևերն ու արտահայտությունները, ինչպես նաև նախադասությունների կա-ռուցվածքը նպաստել են զինվորի խոսքի հուզաբարդաբանական երանգը պահպանելուն:

Ժողովրդական լեզվին ընդրոշ արտահայտություններով, դարձված-ներով առավել հարուստ է , ,Բորողինո, , բանաստեղծությունը /թարգմա-նությունը Ն.Ջաբյանի/: Որոշ դարձվածների թարգմանության ժամանակ զոնված է նրանց հայերեն ժիշ համարժեքը:

Նակայն երբեմն դարձվածները բառացի են թարգմանված: Թարգմանություն մեջ տեղ գտած բարբառային ձևերը, չթարգմանված կամ սխալ թարգմանված բառերը նույնպես նկատելիորեն անդրադառնում են թարգմանության որակի վրա:

Կ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ /Երևան/

ԽՈՒՍԵՐԵՆԻ ՏԱՐԱԾԱՆԱՆ ԵՎ ՀԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՆԱԽԴԻՐՆԵ-
ՐՈՎ ԿԱԶՄԱԿԱՅ ԿԱՌԱՌՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐԵԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍ-
ՏԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Ներկայացվող գեկուցման համար հիմք են ծառայել Երևանի Պոլի-տեխնիկական ինստիտուտի հայկական բաժիններում սովորող ուսանողների ուղևորներն լեզվով զրկած փոխադրությունները:

Հայտնի է, որ որևէ օտար լեզվի զործնական ուսումնասիրության ժամանակ սովորաբար դիմում են մայրենի լեզվի քերականական կաղապարներին: Մակայն տարբեր քերականական համակարգերի պատկանող և տարբեր կառուցվածք ունեցող լեզուներում միշտ չէ, որ հնարավոր է գտնել այլ լեզվի քերականական տվյալ կաղապարը նույնությամբ արտացոլող համար-ժեքները: Այսպես՝ ուղևորների , ,նախդիր + հոլով, , շարահյուսական կաղապարը հայերենում արտահայտվում է ինչպես բառի հոլովված ձևով, այնպես էլ , ,հոլով + ետադաս կապ, , կառույցով: Ուսանողների կողմից հայերենի այդ կառույցների մեխանիկական օգտագործումը ուղևորներն տեքստում հանգեցնում է մի շարք բնորոշ սխալների:

Այս առումով հատկանշական են ուղևորների **Б** և **НЗ** նախդիրներով տարածական և ժամանակային հարաբերություններ արտահայտող կառույցների օգտագործման առանձնահատկությունները: Եթե ժամանակային և տարածական հարաբերություններ արտահայտելու համար ուղևորների **НЗ** և **Б** նախդիրները հանդես են գալիս հայցական և ներգոյական հոլովների հետ, ապա հայերենի համապատասխան կառույցներում կարող են հանդես գալ ինչպես նշված, այնպես էլ այլ հոլովներ, որոշ դեպքերում նաղաս կապերի առկայությամբ: Ուսանողների աշխատանքներում ուղևորներն կառույցների օգտագործման ժամանակ առավել բնորոշ սխալները կապված են հենց այս նախդիրների / **Б**, **НЗ** / ինչպես քացակայության, այնպես էլ ոչ միշտ օգտագործման հետ. Այսպես՝

1927 թ. նա ավարտեց ակադեմիան: /**Б**/ 1927 г. он окончил академию.

Հաջորդ օրը Գերովի տուն մի կին եկավ: /На/ другой день в дом Перова пришла одна женщина.

Մի երիտասարդ, առանց երկար մտածելու, մտավ շենք և արագ բարձրացավ երրորդ հարկ: Один молодой человек, недолго думая, вошел /в/ здание и поднялся /на/ третий этаж.

Սեզ հրավիրեցին ուսանողական ակումբ: Нас пригласили /в/ студенческий клуб.

Հ.Լ. ՋԱԲԱՐՅԱՆ /Երևան/

ՓՈՒՍԱՌՈՒՓՅՈՒՆՆԵՐԻ ՆԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ-ԻՄԱՍՏԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

1. Փոխառությունները լեզվի մեջ կատարվող այն ներթափանցումներն են, որոնց արդյունքը լեզվական մի այլ համակարգ է: Դրանք իրենց քանակական և որակական բնութագրերով կարող են լինել շատ բազմաբնույթ, սկսած փոխազդեցական աննշմար իմաստային անդաշտներից մինչև օտար լեզվական ձևերի ամբողջական և անփոփոխ ներառումը:

2. Ըստ այն հատկանիշի, թե փոխ են առնված նյութական, թե ոչ նյութական տարրեր, փոխառությունները բաժանվում են երկու խմբի՝ հարմարեցումներ և ընդօրինակումներ: Հարմարեցումն այն դեպքն է, երբ տվյալ լեզվական համակարգին հարմարեցվում են փոխառու լեզվական համակարգից վերցված նյութական տարրեր /հնչյուն, մասնիկ, բառ, արտահայտություն/: Ընդօրինակումն այն դեպքն է, երբ տվյալ լեզվական համակարգի ձևերով ստեղծվում է լեզվական մի այլ համակարգի միավորի համարժեքը:

3. Ըստ այն հատկանիշի, թե փոխառյալ միավորի արտաքին ձևը պահպանվում է, թե ոչ, հարմարեցումները լինում են երկու տեսակ՝ պատաստումներ և յուրացումներ: Պատաստումն այն դեպքն է, երբ փոխառյալ միավորի նյութական կերպարանքը պահպանվում է մասնակիորեն կամ վերականգնված /օրինակ, կինոսիրող, ավտոդպրոց, կուլանտեսություն/: Ցուրացումն այն դեպքն է, երբ լեզվական փոխառու համակարգի միավորը վերցվում է ամբողջական կերպով:

4. Ըստ այն հատկանիշի, թե փոխառությունը կառարելիս բնօրինակ միավորի հնչյունական ձևը պահպանվում է, թե ոչ, յուրացումները լինում են երկու տեսակ՝ դաշնավորումներ և վերադարձություններ: Դաշնավորումն այն դեպքն է, երբ փոխառյալ միավորը պահպանում է բնօրինակի բառածևը, սակայն հարմարեցվում է փոխառող լեզվի հնչյունական համակարգին/ օրինակ, փիլիսոփա, երանգ, եկեղեցի/: Վերադարձման դեպքում պահպանվում է բնօրինակի հնչյունական ձևը:

5. Ըստ այն հատկանիշի, թե փոխառությունը կատարելիս բնօրինակ միավորի արտասանական ձևը պահպանվում է, թե ոչ, վերադարձությունները լինում են երկու տեսակ՝ կրկնակումներ և տեղադրումներ: Կրկնակումն այն դեպքն է, երբ փոխառյալ միավորը պահպանում է բնօրինակի հնչալթային կազմը, սակայն արտասանվում է փոխառող լեզվի կանոններով /օրինակ, սովետ, դիրեկտոր, ջենսմեն/: Տեղադրումն այն դեպքն է, երբ փոխառյալ միավորը փոխառու լեզվից նույնությամբ փոխադրվում՝ տեղադրվում է փոխառող լեզվի մեջ: Կրկնակմանն ու տեղադրմանը զրավոր խոսքում հարաբերակից են զրադարձությունն ու հնչադարձությունը:

6. Ըստ այն հատկանիշի, թե փոխառյալ միավորը պահպանում է բնօրինակի կառուցվածքը /կաղապար/, թե միայն իմաստային ձևը, ընդօրինակումները լինում են երկու տեսակ՝ պատճենումներ և նմանակումներ: Պատճենումն այն դեպքն է, երբ ավյալ լեզվական համակարգում միավոր է ստեղծվում մի այլ լեզվական համակարգի բնօրինակ միավորի կաղապարով /օրինակ՝ հնգամյակ, ինքնաթիռ, ընդհատակյա/: Նմանակումն այն դեպքն է, երբ բնօրինակի իմաստային ձևը փոխառյալ լեզվում արաաայաովում է սեփական միջոցներով:

7. Ըստ այն հատկանիշի, թե փոխառու լեզվի միավորը ընդօրինակվելիս պահպանում է բնօրինակի սաուգաբանական ձևը, թե միայն ներքին ձևը, նմանակումները լինում են երկու տեսակ՝ արաապատկերումներ և վերածումներ: Արաապատկերման դեպքում ավյալ լեզվական համակարգում ստեղծվում է մի այլ լեզվից ընդօրինակված միավոր ըստ բնօրինակի սաուգաբանական ձևի /օրինակ՝ մենակաաոր, փոշեկուլ, լուծաբք/: Վերածումն այն դեպքն է, երբ բնօրինակի ներքին ձևը փոխառյալ լեզվում արաաայաովում է ինքնուրույն կերպով:

8. Ըստ այն հատկանիշի, թե մի այլ լեզվի միավորը ավյալ լեզվում ընդօրինակվում է ըստ բնօրինակի նշանակության, թե անկախ դրանից, վերածումները լինում են երկու տեսակ՝ թարգմանություններ և փոխադրություններ: Թարգմանության դեպքում պահպանվում է բնօրինակ միավորի նշանակությունը /օրինակ՝ համալը, հերթափոխ, լիազուաոր/:

Փոխադրության դեպքում միանգամայն ինքնուրույն միավոր է ստեղծվում ըստ բնօրինակի նշանակելիի /օրինակ՝ հարցազրույց, ժայռալակ, երաժըշտականոց, քանակար, փակուղի, զբոսախնջուկ/: Փոխադրությունը համարժեք է տվյալ միավորի ինքնուրույն, անկախ կազմությանը և ըստ էության փոխադրություն չէ:

Ս.Տ. ԶՈՒՅԱՆ /Երևան/

**ԲԱՆԱՍՏԵՂԵԱԿԱՆ ԱՍՈՒՅՔԻ ԽՄԱՏԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒՅՄԱՆ
ՄԱՍԻՆ**

Բանաստեղծի նպատակն է խոսել ոչ թե այն մասին, ինչ եղել է, այլ այն մասին, ինչ կարող էր լինել:
Արխատտել

Խոսքից բխում է ոչ թե ինքը առարկան, այլ լույս այդ առարկայի մասին խոսելու ցանկությունը:
Անանդադարդհանա

Այն ամենը, ինչ կարող է նկարագրվել, կարող է նաև իրականանալ:

Վնտգենշտայն

Ինչպես հայտնի է, իմաստաբանության մեջ տարբերակվում են ասույթի երկու իմաստային կարողություններ՝ ուժեղ և թույլ: Առաջինը սահմանվում է որպես հարաբերություն ասույթի և արտաքին իրականության միջև, երկրորդը՝ որպես ասույթի մեջ ներկայական հարաբերակցություն: Սակայն բանաստեղծական ասույթներում նման սահմանազատում կատարելը շատ ավելի դժվար է: Այդ էր պատճառը, որ 20-ական թվականներից սկսած հաստատվել էր այն կարծիքը, թե բանաստեղծական ասույթը կարելի է սահմանել որպես ասույթ, սահմանված ինտենսիվությամբ, որը երբեք էքստենսիվությամբ անսահման չէ: Այդպիսով, փաստորեն ժլետվում էր բանաստեղծական ասույթի իմաստային ուժեղ կարողությունը: Սակայն արդի ենթադրական տրամաբանության իմաստաբանական որոշ կարգերի օգտագործումը հնարավորություն է տալիս վերանայելու այդ խն-

դիրը:

Օգտվելով ,,հնարավոր աշխարհներ,, և ,,ենթադրական մոտեցում,, հասկացություններից, կարելի է սահմանել բանաստեղծական ասույթի ճշմարիտ կամ կեղծ լինելու պայմանները, բանաստեղծական ռեֆերենցիայի սկզբունքները և ի վերջո տալ ,,բանաստեղծական աշխարհ,, հասկացության ավելի ճշգրիտ մեկնություն: Փորձ է արվում ապացուցելու, որ նման մոտեցման հիման վրա հնարավոր է նախ՝ ավելի բազմակողմանի բացատրել թույլ իմաստաբանությանը վերաբերող որոշ երևույթներ /թեմա, պատկեր, մեկնություն/, երկրորդ՝ կապ հաստատել արդի լեզվաբանական և արիստոտելյան պոետիկաների միջև և, ի վերջո՝ լեզվի բանաստեղծական օգտագործումը դիտել որպես լեզվի իմացաբանական կարողության զրևեցում:

Ե.Մ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ /Երևան/

ՍՏ.ՆԱԶԱՐԱՅԱՆԻ ՆԱԽԱՅՈՒՄԻՍԱՓԱՅԼՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԵՋՈՒՆ

1. 1951 թ. լույս է տեսնում Ստ.Նազարյանի ,,Յաղագս փորձական հոգեբանության մաս,, գրաբարով գրված գիրքը /այսուհետև՝ ՅՓՀ/, որը գիտական տվյալ բնագավառում առաջին աշխատությունն էր արևելահայ մշակույթի մեջ: Այս գրքի լեզուն բնութագրել են շատերը /Ալ.Շերիցյան, Լեո, Ս.Շահազիզ/, սակայն փաստացի բնությունը կատարել է միայն Ն.Չերքեզյանը:

Չերքեզյանը բնությունը չի կատարել գիտական անալիզության ըսկզբունքով՝ ա/ՅՓՀ-ի լեզուն բնադառն է ժամանակի լավագույն՝ Մեխիթարյանների կողմից մշակված գրաբարի դիրքերից, մինչդեռ հարկ էր նկատի ունենալ գրաբարի գործադրման ընդհանուր մակարդակը արևելահայ իրականության մեջ: Բ/ 254 կետով ներկայացվող քննադատությունը գրքի գրեթե բոլոր օրինակային սխալների ցանկն է, և այդ սխալները գլխավորապես ոճական են, հետևաբար էական չեն: Գ/Բողոքողի նկատի չեն առնված այն դժվարությունները, որոնք կապված էին մի նոր գիտություն հայերենով առաջին անգամ արաբալատելու հետ: Դ/Գնահատված չեն գրվածքի խիստ գիտական ոճը, ստեղծված տերմինաբանությունը, որոնք ընդարձակում և հարստացնում էին հայ գիտական լեզվի հնարավորությունները:

2. ՅՓՀ-ի լեզուն 18-19-րդ դարերի գրաբարն է, ավելի ստույգ՝



գիրքը զրկած է Վենետիկյան Մխիթարյանների 40-50-ական թվերի զրաբարի
հետևողությունը: 5-12-րդ դարերի զրաբարին բնորոշ որոշ ծանրի զործա-
ծությունը հետևանք է զերմաներենի և ռուսերենի մի քանի բառային կա-
ռույցների իմաստը ավելի մեծ համապատասխանությունը արտահայտելու
ծգոման: Գրքում հստորեն օգտագործվել է 19-րդ դարի տերմինացված բա-
ռապշարը, մասնավորապես Մխիթարյանների կողմից ստեղծված զիտական
բառերը: Զիշ չեն նաև հեղինակի հաջող տերմինացումները և նորաբանու-
թյունները, որոնք զրեթե զերծ են օտար ազդեցությունից: Այս զրքում
համարյա չեն նկատվում Առ.Նազարյանի հետագա երկերին բնորոշ թերու-
թյունները /տերմինակազմական սխեմայնություն, դատողական անվանմանը
նախապատվություն տալը/: Այսուհանդերձ նրա ստեղծած զիտական անվանում-
ներն իրենց մշակվածությամբ, լեզվամտածական հստակությամբ զիշում են
Մխիթարյանների ստեղծած անվանումներին:

3. 1853 թ. ազգաբան աշխարհաբարերկու զրքերից /,,Վարդապե-
տարան կրոնի,, ,,,Առաջին հոգեղեն կերակուր,, / պարզվում են աշ-
խարհաբար զիտական լեզվի մշակման նազարյանի ըմբռնումները՝ ա/զրա-
կան լեզվի հիմք պետք է ընդունել ոչ թե ժողովրդախոսակցական արեւելա-
հայ աշխարհաբարը, այլ մտավոր խավի զործածած աշխարհաբարը՝ այն մաք-
րելով օտարաբանությունից և ազնվացնելով զրաբարով. բ/աշխարհաբարին
զորություն տալու և հայոց լեզվի բնույթին հարազատ մնալու նպատա-
կով հարկ է դուրս գալ 18-19-րդ դարերի զրաբարի ուղղոթից և օգտա-
զործել 5-12-րդ դարերի զրաբարը. գ/լեզվի մշակման հարցում առանձ-
նահատուկ դեր ունեն մեծ անհատները:

4. Աշխարհաբար զրվածքների մեջ Առ.Նազարյանը շնդվում է Մխի-
թարյանների զրաբար և հատկապես աշխարհաբար լեզվական մշակույթից:
Բարձր կարծիք ունենալով Մխիթարյանների զրաբարի մասին, նա չէր զնա-
հատում արևմտահայ աշխարհաբարը ընդհանրապես՝ զտեւելով, որ այն ա/իր
վրա կրում է տանկական լեզվամտածողության դրոշմը. բ/զրաբարի բառա-
պաշարը օգտագործում է հնչյունափոխված՝ ,,,ջարդուփշուր,, , ծնով.
գ/հակված է ռամկախոսության. դ/հետևաբար և չի կարող արտահայտել
պաշառմ մակարդակով զեղարվեստական, առավել ևս զիտական բովանդակու-
թյուն:

5. Առ.Նազարյանը աշխարհաբար զրվածքներում տերմինավորել է
բազմաթիվ զրաբարյան բառեր՝ մեծ չափով օգտագործելով նաև Մխիթար-
յանների մշակած զիտական բառապաշարը: Նա ունի շատ նորագույն բառեր,
որոնք ընդհանուր առմամբ դյուրընկալ են, սակայն սրանցում նկատելի
է արդեն դատողական անվանման միտումը: Այս երկերում կան մի շարք
անհարկի փոխառություններ:

ԲԱՌԱՅԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՎԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ
ՇՈՒՐՋԸ

1. Բառազիտական մակարդակի հիմնական միավորը բառն է՝ բացարժակ ձևում. ձևաբանական մակարդակի հիմնական միավորը, ինչպես նշել է Մ.Աբեղյանը, բառածնն է՝ բառի քերականական ձևը:

2. Բառակազմությունը և բառաիմաստաբանությունը բառազիտության երկու կարևորագույն բաժիններն են. բառակազմությունը լեզվի բառամթերքն ուսումնասիրում է՝ ելնելով բառի բառարանային ձևի արտահայտության դիտվածքից, իսկ բառաիմաստաբանությունը ելնում է նույնի բովանդակության դիտվածքից:

3. Արդարացված չեն ձևաբանական մակարդակում կատարվող բառակազմական և բառաիմաստաբանական քննությունները: Ձևաբանության առարկան բառածեքով արտահայտված քերականական կարգերն են և ոչ թե խոսքի մասերը:

4. Բուն խոսքի մասերը առաջին հերթին բառային կարգեր են. ներանը չունեն քերականական արտահայտության յուրահատուկ ձև: Խոսքի մասերը ներկայանում են միմյայն բառերի տեսքով. խոսքիմասային իմաստները բառային իմաստների անկապտելի բաղադրատարրն են: Խոսքի մասերի իմաստային դասակարգումն ու քննությունը բառաիմաստաբանության խնդիրն է:

5. Բառաիմաստաբանությունն ուսումնասիրում է լեզվի միայն լիիմաստ բառերը, քանի որ թերիմաստ /ձևական/ բառերը գուրգ են բառային իմաստից: Ըստ մեզ, խոսքիմասային են այն իմաստները, որոնք ընդհանրական կամ նույնական են առավելագույն թվով լիիմաստ բառերի համար:

6. Խոսքի մասերը քերականական արժեք և ուղղվածություն ունեցող բառակարգերն են. բառերը համակարգայնորեն քերականության մեջ են ներքաշվում խոսքիմասային իմաստների շնորհիվ: Ոչ խոսքիմասային /անվանողական/ իմաստները խանգարում են քերականական համակարգերի՝ իլեխալկան վիժակ ունենալուն՝ հիմք հանդիսանալով շեղումների ու բացառությունների համար: Այսպիսով, բառերի մասնավոր իմաստները քերականական աշփեք ունեն միայն բացասական առումով:

7. Դերանական և անվան հակադրությունը խոսքիմասային ընույթ չունի. դերանուններն, ի տարբերություն անունների, չունեն անվանողական արժեք, արտալեզվական նշանակելի, բառային մասնավոր իմաստ, սա-

կայն օժտված են բառային առավել ընդհանրական՝ խոսքիմասային իմաստներով: Դերանուններն ունեն նույն զարգի և նույնքան խոսքիմասային իմաստներ, որքան և անունները:

8. Դերանունները, հատկապես հարցադառնաբերական դերանունները, ըստ էության հանդես են գալիս որպես լեզվամտածողության կողմից իրականության առավել ընդհանրական բառային տրոհման ցուցիչներ: Արտալեզվական աշխարհը մեր լեզվամտածողության մեջ ամենաընդհանուր ձևով ներկայանում է որպես ինչ /առարկայանիշ/, ինչպիսի /որականիշ/, քանի /քանականիշ/, ինչ անել /ընթացանիշ/, ինչպես /կերպանիշ/, ինչքան /չափանիշ/, որտեղ /տարածանիշ/, երբ /ժամանականիշ/: Դրանք էլ հենց հայերենի խոսքիմասային իմաստներն են:

9. Խոսքի մասերից ձևաբանական արժեք ունեն, այսինքն՝ ձևաբանության առարկա են միայն նրանք, որոնք կարող են կազմել բառաձևեր՝ բառի ցերեկանական ձևեր: Ասենք, ածականը կամ Բվականը իրենց բուն իմաստով ցերեկանական արժեք կունենան միայն այն դեպքում, եթե ապացուցված համարվի, որ ածականի համեմատության աստիճանները կամ Բվականի տեսակները բառաձևեր են և ոչ տարբեր բառեր /լավ - ամենալավ - լավագույն, երկու - երկրորդ - երկուական տիպի ձևերը ավելի շատ բառակազմական, իսկ լավ - ավելի լավ տիպի ձևերը՝ շարահյուսական արժեք ունեն/:

10. Խոսքի մասերի քննությունը բառիմաստաբանության մեջ արդարանում է նաև նրանց ունեցած բառակազմական արժեքով:

11. Քերականության քննությունն ըստ խոսքի մասերի լիովին տարբերվում է նրա մակարդակային քննությունից. առաջին դեպքում փաստորեն որպես քերականության էլենտրոնական միավոր է դիտվում խոսքի մասը, իսկ երկրորդ դեպքում քերականությունը բաժանվում է երեք մակարդակի՝ բառազիտական, ձևաբանական, շարահյուսական, և ամեն մեկի համար առանձնացվում է իր հիմնական միավորը:

Գ.Կ.ԽԱՉԱՏՐՅԱՆ /Երևան/

ԳՐԱԲԱՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՅԱՆ-ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱՋՄ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ընդհանրական-դիմավոր են կոչվում բայական այն միակազմ նախադասությունները, որոնց մեջ դիմավոր բայով արտահայտված գործողությունը կարող է վերագրվել ընդհանրապես բոլորին, այսինքն,

որպես ընդհանրական-դիմափոր միակազմ նախադասության ենթակա կարող է ենթադրվել , ,մարդ արարածն ընդհանրապես , , :

2. Գրեթե ամբողջությամբ որպես ընդհանրական-դիմափոր նախադասության ստորոգյալի արտահայտման միջոց ծառայում են և՛ առաջին, և՛ երկրորդ, և՛ երրորդ դիմային ձևերով արտահայտված բայերը, որոնք կազմված են կարող են լինել ա/պարզ, բ/վերլուծական, գ/դերբայական հավելադրությամբ, դ/անվանա-բայական հարադրություններով :

3. Ընդհանրական դիմափոր միակազմ նախադասությունների հնագույն օրինակներ պետք է համարել առ, արի, բեր, զոզ, զոնեա /զոնե/, զրեա /զրէ/, եկ, թող, համարեա բայաձևերով արտահայտված նախադասությունները, քանի որ դեռևս 5-րդ դարում /նաև , ,վիսասանական հայերենում, / այս բայաձևերն իրենց որոշ կիրառությունների մեջ չունեն դիմային որոշակիություն և կատարում են ոչ միայն ստորոգյալի պաշտոն, այլև ունեն եղանակիչ և մակերայական բառերի գործառույթ : Ավելին, Դիոնիսոս Թրակացու , ,Քերականության, , հայերեն մեկնությունների և թարգմանությունների մեջ ած, թող, եկ, բեր բայաձևերը համարվում են մակերայ : Վերջին երեք բայերը եղանականիշ գործառույթ ունեն նաև ժամանակակից հայերենում :

4. Ընդհանրական-դիմափոր նախադասություններ են համարվում ոչ միայն այն նախադասությունները, որոնց մեջ բացակայում է ենթակա, այլև ձևական ենթակա ունեցող /մարդ, մենք, դու, դուք և այլն/ միշտ բացակայող նախադասություններ : Այդ , ,ենթակաները, , նախադասություններին չեն հաղորդում դիմային որոշակիություն, և ստորոգյալում չունի վերադրման որոշակի առարկա :

5. Ընդհանրական-դիմափոր միակազմ նախադասություններ են համարվում նաև մարդ գոյականով արտահայտված կոչական կամ կոչական բառակապակցություն պարունակող նախադասությունները :

6. Ընդհանրական-դիմափոր միակազմ նախադասությունները հիմնականում առաջացել են երկկազմ նախադասություններից :

7. Այս նախադասությունները համեմատության եզրեր ունեն բայի դիմային ձևով արտահայտված գլխավոր անդամ ունեցող անորոշ-դիմափոր միակազմ նախադասությունների հետ. սրանք երկուսն էլ ա/չունեն ենթակայի բառային արտահայտություն, բ/միակազմ են, գ/ առաջացել են երկկազմ նախադասություններից, դ/արտահայտվում են դիմա-թվային միևնույն ձևերով և ե/ենթադրում են անձ-ենթակա :

8. Ընդհանրական-դիմափոր և անորոշ-դիմափոր միակազմ նախադասությունների առընթերցման համար կա մի պարզ միջոց. երբ որևէ

ղիմավոր միակազմ նախադասության ավելացվում են ընդհանրապես, առ-
հասարակ կամ էլ սովորաբար բառերը, և սրանք չեն խթարում եվայլ նա-
խադասության իմաստային և քերականական ձևավորվածությունը, այլ, ընդ-
հակառակը, այն բերում են առավել ամբողջական տեսքի, ապա նախադասու-
թյունն ընդհանրական-ղիմավոր է: Հակառակ պարագային մենք գործ ունենք
անորոշ-ղիմավոր նախադասության հետ:

9. Գրաբարում ընդհանրական-ղիմավոր միակազմ նախադասություններ
ավելի հաճախ հանդիպում են խոսքային բարդ կառույցներում, շարադա-
սությամբ լինելով նախադաս, միջադաս կամ վերջադաս:

10. Բովանդակության դիտվածքում այս նախադասությունների մի-
ջոցով արտահայտվում են ա/խորհուրդներ, ք/օրենքներ, գ/խրատներ,
դ/պատվիրաններ, ե/առածական խոսքեր և այլն, որոնք շատ հաճախ գու-
գորդվում են նպատակի, պատժառի, հետևանքի, պայմանի և պարագայական
այլ նրբերանգներով:

Գ.Վ. ՀԱՍՈՐՅԱՆ /Երևան/

ԱԶԳԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՐՈՂՆԵՐԸ

1. Ազգակցության տերմինների ուսումնասիրության մեթոդնե-
րը խմբավորելի են ըստ ուսումնասիրության ուղղվածության՝ վերլու-
ծական, համադրական և խոռո տիպերի:

2. Վերլուծական մեթոդները տերմինի նշանակությունը վերա-
ծում են նվազագույն իմաստային բաղադրիչների, արդյունքում ստանա-
լով նշանակելիս բնույթագրող հատկանիշներ:

3. Համադրական մեթոդները տերմինի իմաստը կառուցում են ապ-
րիորի հատկանիշների համադրությամբ /ընտրված հատկանիշները նշանա-
կելիսների հատկություններն են՝ ինտուիտիվ հիմքով առանձնացված և
մեթոդի սահմաններում անապացուցելի/:

4. Խոռո տիպի մեթոդների մի ենթատեսակն է համընդհանուր լեզ-
վական կադապարը: ՀՀ-ով ուսումնասիրությունը կարող է ընթանալ
իբրև վերլուծություն կամ համադրություն /ըստ անհրաժեշտության կամ
նպատակահարմարության/: ՀՀ-ն նախատեսված է ցանկացած լեզվի տար-
բեր մակարդակների միավորների և հարաբերությունների ուսումնասի-
րության համար և ազգակցության տերմինների նկատմամբ նրա կիրառումը
մասնակի իրացում է: ՀՀ-ի կառուցման սկզբունքներն են՝ համընդհան-
րականությունը, նկարագրության միասնականությունը և խնայողակա-

նությունը: Մյուս մեթոդների հետ միակ ընդհանրությունը տեղիներին
ընդհանրությունն է հատկանիշներով:

5. Խառը տիպի մյուս մեթոդները ուսումնասիրության ուղղու-
թյունը ընտրելու հնարավորություն չեն ընձեռում: Վերլուծությունը
և համադրությունը հանդես են գալիս իբրև մեջընդմիջող և հաջորդող
փուլեր առանց սկզբունքային տարբերական:

6. Մեթոդների ընդհանուր բնութագրումը ցույց է տալիս, որ
եկակետային միավորները իմաստային հատկանիշներն են: Հատկանիշները
կարող են լինել որակական և ձևային, վերջիններս իրենց հերթին լի-
նում են պայմանական և քանակական: Որակական հատկանիշները կարելի է
դասակարգել ըստ ընդհանրացման բնույթի՝ կարգային /այլևս անբաժա-
նելի/ և ոչ կարգային /մասնավոր/:

7. Տարբեր մեթոդներում գործող հատկանիշները, ընդհանրառում են
իբրև նշանակելիների հատկությունների արտացոլումներ: Հետևաբար
որևէ մեթոդի առաջնություն տալիս պետք է ելնել ուսումնասիրության
նպատկադրումից, ապա և մեթոդի ընձեռած հնարավորություններից:

8. Մեթոդի տեսակետից անթերի է ՀԼՎ-ն /հմտ., մյուս մեթոդնե-
րով անսերկայացնելի այնպիսի երևույթներ, ինչպիսիք են խմբական ա-
մուսնությունը, ընտանիքի կազմումը, քայքայումը, նախկին և ապագա
ազգականները/: Հետևաբար ՀԼՎ-ն կարելի է սահմանել իբրև ուսումնա-
սիրության ցանկացած տեսակետից կիրառելի մեթոդ:

Ն.Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ /Երևան/

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՆԱԿԱԳԱՐԱՅԻՆ ԴԱՍԱՆԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ

Գ.Բ.ՋԱՆՈՒԿՅԱՆԻ

Հայ լեզվաբանության մեջ խոսքի մասերի կադապրային դասա-
կարգման հարցը առաջ է քաշել Գ.Ջահուկյանը: Նադապրային դասակար-
գումը, ըստ նրա, հնարավորություն է ընձեռում խուսափելու կիրառ-
վող մյուս սկզբունքների միակողմանիությունից և բառերը քննելու
իմաստա-քերականական հատկանիշների միասնական ամբողջությամբ: Են-
թադրվում է, ,բառային միավորների խմբավորում, ըստ նախադասության
կազմող և լրացնող կադապրների մեջ նրանց զրաված դիրքերի,, : Այս
դեպքում ամբողջովին բացառվում են կրկնվող տարրերը:

Շեշտվում է խոսքի մասերի դասդասման ու կադապրի կառուցման

հնարավոր երկու պայման: Այս պարզաբանվում են հիշյալ սկզբունքի հետ կապված հասկացություններ /անտարրոքություն, փոխանցում, փոխարկում, փոխակերպում/:

Առանձնացվում է կաղապարային մի նմուշ և, հայերենում բառերի բնական հաջորդականության հիմքի կառուցմամբ տարբերակվում են հետևյալ խոսքի մասերը. 7 լիիմաստ՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, մակլրացական, 5 կապ-հարաբերական՝ կապ, առկապ, ստորակապ, համակապ, բառ-մասնիկ, 4 եղանակավորող՝ ծայնարկություն, իմացարկություն, եղանակական, երանգական:

Խոսքի մասերի փոխհարաբերությունն արտահայտվում է հետևյալ կաղապար-բանաձևերով.

1. Գ → Ան + ալ + Ան

2. Ան → Գն + հկ + Գն + սկ + Կն + հկ + Կն

3. Ն → ԳՇ + հկ + ԳՇ + ԲՇ + սկ + ԳՇ + հկ + ԳՇ + ԲՇ

4. ԳՇ → /// Դ + հկ + Դ/ ԹՇ + հկ + ԹՇ/ ԱՇ + հկ + ԱՇ/ Գ

5. ԲՇ → ՄՇ + հկ + ՄՇ/ Բ

6. ա-զ/ ԹՇ → /ՄԼ + հկ + ՄԼ/Թ, ԱՇ → /ՄԼ + հկ + ՄԼ/Ա,

ՄՇ → /ՄԼ + հկ + ՄԼ/Մ

7. ա-դ/ /բմ/Գ, /բմ/ Ա, /բմ/Բ, /բմ/Մ:

Եղանակային բառային միավորների ղեպընում՝

8. ///ծ/ի/եդ/ն

9. ա-է/. /եր/Գ, /եր/Ա, /եր/Թ, /եր/Դ, /եր/Բ, /եր/Մ, /եր/ՄԼ:

Բառաձևերին կից, նրանց եղանակով կազմվում են կաղապարային

համապատասխան օրինակներ:

Ս.Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ /Երևան/

ՊԱՏՄՈՂԱՍԱՆ ՀՆՁԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀՆՁԵՐԱՆԳԸ ԳՐԱԿԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

1. Արևմտահայերենի պատմողական հնչադասության հնչերանգի ուսումնասիրությունը կառարել ենք փորձառական եղանակով: Ձայնագրել ենք 18-20 տարեկան երեք բնյրութայների, որոնք բոլորն էլ տալրական և միջնակարգ կրթությունը ստացել են հայկական վարժարաններում՝ զրական արևմտահայերենով:

2. Ուսումնասիրել ենք հիմնական տոնի համախականության

շարժման ուղղութիւնը, միջուկի կառուցվածքը և մի շարք ժայնաքանական հատկութիւններ՝ ըստ ծայնի համախանութիւնը, ուժգնութիւնը ու տեղութիւնը, և եւել են որոշակի եզրակացութիւններ:

3. Հիմնական տոնի շարժման ուղղութիւնը մեծամասամբ բարձրացող-իջնող է: Այն կարող է լինել նաև իջնող-բարձրացող և հավասար իջնող, քայքայ վերջին տարեբանները շատ հազվադեպ են հանդիպում:

4. Միջուկը /գլխավորապէս կողմ վանկը/ արտահայտվում է տոնի և ուժգնութիւն փոփոխութիւն միջոցով. ընդ որում էական չեն՝ այդ փոփոխութիւնները կատարվում են միջուկում, նախամիջուկում, ետմիջուկում, քն ըլողում միաժամանակ, կարևորն այն է, որ մի կետում առաջանա հակադրութիւն /տոնի կամ ուժգնութիւն կամ երկուսինը միաժամանակ/: Այն դեպքում, երբ տոնը միջուկում, նախամիջուկում և ետմիջուկում մնում է անփոփոխ, ապա անպայման հակադրութիւն է առաջանում նշված վանկերի ուժգնութիւններին միջև:

5. Միջուկում տոնը հիմնականում աճող է՝ միջինը 2-5 կիսատոն: Երբ միջուկը շարժվում է դեպի հնչադասութիւն ավարտը, ապա նրանում տոնը կարող է նաև նվազել, այն էլ չնչին չափով՝ 1-2 կիսատոն: Երբ միջուկը վերջին վանկում է, ապա նրանում տոնը միշտ նվազող է:

6. Հնչադասութիւն սկզբի համախանութիւն մակարդակը ծայնի ցածր ժայնածավալ ունեցող հաղորդավարների դեպքում փոփոխվում է 80-120 հց սահմաններում, իսկ բարձր ժայնածավալ ունեցողների դեպքում՝ 120-170 հց սահմաններում:

7. Հնչադասութիւն համախանութիւն ժայնածավալը ծայնի ցածր ժայնածավալ ունեցող հաղորդավարների դեպքում փոփոխվում է միջինը 5-7 կիսատոն սահմաններում, իսկ բարձր ժայնածավալ ունեցողների դեպքում՝ 10-12-ի սահմաններում:

8. Ետմիջուկային վանկի համախանութիւն նվազման ժայնածավալը փոփոխվում է միջինը 0-7 կիսատոն սահմաններում:

9. Հնչադասութիւն վերջին վանկի համախանութիւն ժայնածավալը միշտ նվազող է՝ միջինը 2-6 կիսատոն չափով:

10. Հնչադասութիւն առավելագույն ուժգնութիւնը փոփոխվում է միջինը 32-35 դբ սահմաններում:

11. Հնչադասութիւն ուժգնութիւն ժայնածավալը փոփոխվում է միջինը 6-12 դբ սահմաններում:

ՀՈՄԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՇԱՐՔԵՐԻ
ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

1. Հոմանշության լայն ըմբռնումը /երբ հոմանիշ են համարվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք կարող են իրարից տարբերվել միայն իմաստային նրբերանգներով, ոմական կիրառությամբ /համախ բերում է այն բանին, որ հոմանիշ են համարվում քաղիմաստային դաշտ /ԲիԴ/ կազմող բառերը, որոնք հոմանիշ են ոչ թե միմյանց նկատմամբ, այլ ԲիԴ անուն-զվխաբառին, նրա հետ ունենալով ընդհանուր-մասնավորի, սեռի-տեսակի և նման կարգի այլ հարաբերություններ: Այդպիսի հոմանշությունը, սակայն, միակողմանի է, քանի որ խոսքի մեջ դաշտի բառը միշտ հնարավոր է փոխարինել նույն դաշտի ավելի ընդհանուր իմաստ արտահայտող անուն-զվխաբառով, իսկ հակառակը համախ անհնարին է, քանի որ աղբատացնում, է իսկ երբեմն նույնիսկ-աղծատում է միտքը:

